


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2012թ. նոյեմբերին


/վերլուծություն/

2012թ. նոյեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 15724 գործարքներ, որոնց քանակը 2012թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 9.7%-ով, իսկ 2011թ. նոյեմբերի համեմատ՝ 7.6%-ով:

2012թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4305 օտարման գործարքների 77.3%-ը կազմել են առուվաճառքները, 22.3%-ը՝ նվիրատվությունները և 0.4%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 33.9%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 34.0%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2012թ. նոյեմբերին, 2012թ. հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 5.5%-ով, իսկ 2011թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 3.9%-ով:

2012թ. նոյեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 57.6%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2012թ. նոյեմբերին, 2012թ. հոկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 21.1%-ով, իսկ 2011թ. նոյեմբերի համեմատ՝ 17.6%-ով:

2012թ. նոյեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	նոյեմբեր 2011թ.	նոյեմբեր 2012թ.	հոկտեմբեր 2012թ.
Կենտրոն	452000	420300	419500
Արաբկիր	335300	348000	347000
Քանաքեռ-Զեյթուն	260800	277000	276100
Նոր-Նորք	232200	241050	239000
Ավան	242200	249000	248050
Էրեբունի	232900	242000	241500
Շենգավիթ	232500	247000	245000
Դավթաշեն	257000	267500	267000
Աջափնյակ	232800	237500	235600
Մալաթիա-Սեբաստիա	220700	233100	232100
Նուբարաշեն	140100	143500	142000
Միջինը Երևանում	258000	264200	263000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. նոյեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. հոկտեմբերի համեմատ, աճել են 0.5%-ով:

2012թ. նոյեմբերին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 437 բնակարաններ, որոնց քանակը, 2012թ. հոկտեմբերի համեմատ աճել է 3.1%-ով, իսկ 2011թ. նոյեմբերի համեմատ՝ 24.5%-ով:

2012թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		նոյեմբեր 2011թ.	նոյեմբեր 2012թ.	հոկտեմբեր 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	121120	113600	113600
	Ապարան	52700	52000	51050
	Թալին	68100	61200	61200
Արարատ	Արտաշատ	94000	94100	94000
	Մասիս	111300	112000	112000
	Վեդի	93300	98100	97700
	Արարատ	78900	74200	74200

Արմավիր	Վաղարշապատ	139500	153200	153200
	Արմավիր	114800	119100	119100
	Մեծամոր	79600	86500	86500
Գեղարքունիք	Սևան	88600	99000	99000
	Գավառ	53600	56100	55000
	Մարտունի	92600	107300	107200
	Վարդենիս	33500	40500	39500
	Ճամբարակ	26600	25000	24050
Լոռի	Վանաձոր	84000	87200	87200
	Ստեփանավան	76600	74500	74500
	Սպիտակ	102200	99800	99800
	Ալավերդի	39400	53100	53000
	Տաշիր	51600	43800	43800
	Թումանյան	13300	11000	11000
	Շամլուղ	10200	8000	8000
Կոտայք	Աբովյան	143300	153100	153100
	Նոր Հաճն	131100	128500	128500
	Բյուրեղավան	102100	107100	107100
	Եղվարդ	111400	109300	109300
	Հրազդան	60300	61000	60200
	Ծաղկաձոր	207800	292500	292500
	Չարենցավան	76900	84000	84000
Շիրակ	Գյումրի	104400	109100	108900
	Արթիկ	65200	65000	64800
	Մարալիկ	39200	38400	37300
Սյունիք	Գորիս	122400	116000	115300
	Կապան	95100	90200	90200
	Սիսիան	83400	87200	86000
	Մեղրի	74100	73500	72000
	Ագարակ	47200	44000	43800
	Քաջարան	71600	94300	94300
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	82600	89800	88500
	Եղեգնաձոր	115100	118200	117700
	Ջերմուկ	111600	107600	106000
Տավուշ	Դիլիջան	98500	108100	107800
	Իջևան	119300	116000	116000
	Բերդ	56000	55600	54000
	Նոյեմբերյան	43300	44500	43300
	Այրում	31000	27100	26200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. հոկտեմբերի համեմատ, աճել են 0.5%-ով:

2012թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 471 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 118, մարզերում միասին վերցրած՝ 353: 2012թ. նոյեմբերին, 2012թ. հոկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 8.0%-ով, ընդ որում Երևանում՝ 25.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ մնացել է անփոփոխ: 2011թ. նոյեմբերի համեմատ՝ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 7.1%-ով, ընդ որում Երևանում՝ 6.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 7.3%-ով:

2012թ. նոյեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են

հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	նոյեմբեր 2011թ.	նոյեմբեր 2012թ.	հոկտեմբեր 2012թ.
Կենտրոն	470000	469100	467500
Արաբկիր	372200	376200	375000
Քանաքեռ Չեյթուն	279800	288100	286200
Նորք Մարաշ	308300	313100	312500
Ավան	253200	265700	264600
Էրեբունի	237100	233200	232000
Շենգավիթ	242500	250050	249500
Դավթաշեն	269200	269100	267000
Աջափնյակ	242000	243100	242400
Մալաթիա Սեբաստիա	230000	233200	232100
Նուբարաշեն	144800	146200	145100
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	277200	280600	279300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. նոյեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. հոկտեմբերի համեմատ աճել են են 0.4%:

2012թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		նոյեմբեր 2011թ.	նոյեմբեր 2012թ.	հոկտեմբեր 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	133349	134800	134800
	Ապարան	55100	56950	56000
	Թային	72000	68650	68650
Արարատ	Արտաշատ	103400	98700	98600
	Մասիս	114200	113800	113800
	Վեդի	96200	100600	100200
	Արարատ	89100	87300	87300
Արմավիր	Վաղարշապատ	162000	152300	152300
	Արմավիր	117100	106500	106500
Գեղարքունիք	Սևան	94300	94200	94200
	Գավառ	47300	54600	53500
	Մարտունի	97200	94400	94300
	Վարդենիս	38500	37000	36000
	Ճամբարակ	28800	28050	27100
Լոռի	Վանաձոր	97000	98200	98200
	Ստեփանավան	79500	88000	88000
	Սպիտակ	109200	113600	113600
	Այվերդի	40400	48100	48000
	Տաշիր	54200	51100	51100
	Թումանյան	13900	12000	12000
	Շամլուղ	11500	13200	13200
	Ախթալա	25200	29600	29600

Կոտայք	Աբովյան	154100	154700	154700
	Նոր Հաճն	133200	129800	129800
	Բյուրեղավան	109300	120000	120000
	Եղվարդ	121300	116100	116100
	Հրազդան	67800	80800	80000
	Ծաղկաձոր	307800	305000	305000
	Չարենցավան	78200	82500	82500
Շիրակ	Գյումրի	118500	117600	117400
	Արթիկ	68100	62700	62500
	Մարալիկ	40200	50600	49500
Սյունիք	Գորիս	127100	127700	127000
	Կապան	100500	98300	98300
	Սիսիան	89100	91300	90100
	Մեղրի	76100	80300	78800
	Ագարակ	48200	46500	46300
	Դաստակերտ	10500	11610	11610
Վայոց Ձոր	Վայք	83800	86700	85400
	Եղեգնաձոր	119600	115400	114900
	Ջերմուկ	117200	124600	123000
Տավուշ	Դիլիջան	103200	109900	109600
	Իջևան	129700	122000	122000
	Բերդ	58500	59000	59000
	Նոյեմբերյան	46400	46100	46100
	Այրում	34800	34600	34600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. հոկտեմբերի համեմատ, աճել են 0.3%-ով:

Ընդհանուր առմամբ, 2012թ. նոյեմբերին հանրապետությունում օտարվել են 1501 միավոր /834.94 հա/ հողեր, որից Երևանում՝ 103 միավոր /9.50 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 742 միավոր /754.29 հա/, որից Երևանում՝ 11 միավոր /1.84 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 548 միավոր /50.55 հա/, որից Երևանում՝ 48 միավոր /4.24 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 181 միավոր /11.09 հա/, որից Երևանում՝ 43 միավոր /3.36 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 17 միավոր /8.51 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.05 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 6 միավոր /9.93 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 7 միավոր /0.57 հա/ ընդհանուր մակերեսով:

2012թ. նոյեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1292 միավորի /762.83 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 80 միավոր /7.09 հա/, նվիրատվության գործարքներ՝ 199 միավորի /70.69 հա/, որից Երևանում՝ 21 միավոր /2.36 հա/ և փոխանակության գործարքներ՝ 10 միավորի /1.43 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.05 հա/:

Հանրապետությունում 2012թ. նոյեմբերին, 2011թ. նոյեմբերի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 10.7%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 1.7%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 30.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի

նկատմամբ աճել է 50.0%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 261.64 հա, որից 254.41 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 23.1%-ը կամ 298 գործարքներ /98.75 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 23 միավոր /2.08 հա/, իսկ 75.9%-ը կամ 981 միավորը /654.41 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 55 միավոր /5.00 հա/: 2012թ. նոյեմբերին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 13 գործարք /9.66 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2012թ. նոյեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	2	0.22	21	1.86	6	0.70	1	0.05	34	3.37	14	0.88
Արագածոտն	3	2.19	0	0.00	0	0.00	3	0.16	108	77.32	0	0.00	32	3.88	2	0.01
Արարատ	2	1.08	0	0.00	53	4.76	4	0.10	94	37.10	0	0.00	62	5.77	5	0.23
Արմավիր	5	2.65	3	1.15	1	0.20	6	0.12	110	251.76	0	0.00	66	5.72	4	0.04
Գեղարքունիք	5	2.28	2	0.38	12	1.09	13	1.27	80	33.16	1	1.77	25	2.60	3	0.06
Լոռի	4	1.30	0	0.00	11	0.16	19	0.47	20	14.58	0	0.00	18	2.11	3	0.14
Կոտայք	29	57.69	1	3.66	7	0.48	13	0.60	73	143.40	1	0.20	86	7.33	7	0.33
Շիրակ	4	2.63	3	0.04	10	0.17	13	0.77	29	29.24	1	1.00	15	1.33	4	0.27
Սյունիք	4	4.94	0	0.00	1	0.01	1	0.21	14	11.54	0	0.00	6	0.35	1	0.002
Վայոց Ձոր	1	3.00	1	0.06	2	0.07	9	0.19	19	6.95	0	0.00	4	0.31	2	0.01
Տավուշ	0	0.00	1	0.04	10	1.13	9	0.86	13	9.02	0	0.00	14	1.72	2	0.04
Ընդամենը	57	77.76	11	5.33	109	8.29	111	6.61	566	614.77	4	3.02	362	34.49	47	2.01

Ստորև ներկայացվում է 2012թ. նոյեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակա կան կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակա կան կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	2	0.40	0	0.00	0	0.00	2	0.40	21	1.68	0	0.00	0	0.00	2	0.22	19	1.46

Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	5	2.26	2	2.10	0	0.00	0	0.00	3	0.16
Արարատ	1	0.00 3	0	0.00	0	0.00	1	0.003	58	5.93	2	1.08	0	0.00	53	4.76	3	0.09
Արմավիր	5	0.17	1	0.06	0	0.00	4	0.11	10	3.96	5	2.65	2	1.10	1	0.20	2	0.005
Գեղարքունիք	4	0.46	2	0.38	1	0.06	1	0.02	28	4.56	5	2.28	0	0.00	11	1.03	12	1.25
Լոռի	5	0.08	0	0.00	2	0.06	3	0.02	29	1.84	4	1.30	0	0.00	9	0.09	16	0.45
Կոտայք	5	3.79	1	3.66	1	0.03	3	0.10	42	58.24	26	57.30	0	0.00	6	0.45	10	0.49
Շիրակ	10	0.49	0	0.00	3	0.10	7	0.39	18	2.89	2	2.40	3	0.04	7	0.07	6	0.38
Սյունիք	1	0.01	0	0.00	1	0.01	0	0.00	3	3.45	2	3.24	0	0.00	0	0.00	1	0.21
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	13	3.32	1	3.00	1	0.06	2	0.07	9	0.19
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	20	2.03	0	0.00	1	0.04	10	1.13	9	0.86
Ընդամենը	33	5.40	4	4.10	8	0.26	21	1.04	247	90.16	49	75.35	7	1.24	101	8.02	90	5.55

2012թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 8 գործարք /2.40 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2012թ. նոյեմբերին, 2011թ. նոյեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 20.4%-ով: Ընդ որում, Երևանում՝ աճել է 75.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ աճել է 17.1%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 34.7%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 2.6 անգամ, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 16.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 40.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. նոյեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (տախտիկի շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մասվել ազդույն	Միջին			Նվազագույն	Մասվել ազդույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						46	43.70	365.0	12000.0	3690.5
Ապարան	1	0.02	1733.9	1733.9	1733.9	3	2.52	86.5	2727.3	712.5
Թալին	1	2.07	38.1	38.1	38.1	49	18.78	93.6	5494.5	622.5
Ծաղկահովիտ						7	11.57	79.5	1000.0	257.3
Արարատի մարզ										
Արտաշատ	2	1.08	120.0	1815.9	967.9	42	15.07	335.1	10833.3	2745.5
Մասիս						26	11.44	200.0	11904.8	3158.8
Վեդի						25	10.34	207.0	10795.1	1878.6
Արմավիրի մարզ										
Արմավիր						57	150.31	294.3	9090.0	1494.0
Բաղրամյան						16	83.84	90.6	2561.1	765.5
Վաղարշապատ	5	2.65	622.1	696.9	682.0	35	16.23	444.4	11764.7	2510.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						71	18.82	199.8	1875.0	410.0
Ճամբարակ						1	2.00	60.5	953.3	342.5
Մարտունի	5	2.28	117.7	369.2	292.8	2	0.33	51.1	2850.0	735.5
Սևան								52.2	2134.8	318.5
Վարդենիս						6	12.01	41.2	2575.1	400.0
Լոռու մարզ										
Ալավերդի	2	0.24	896.1	903.6	900.0	1	0.24	170.4	6424.2	625.0
Գուգարք	1	0.36	212.2	212.2	212.2	3	0.63	234.6	6065.9	751.3
Սպիտակ						1	0.07	250.0	5555.5	732.3
Ստեփանավան	1	0.70	746.4	746.4	746.4	6	8.45	90.6	1686.6	305.2
Տաշիր						9	5.19	45.3	1384.4	150.0

Կոտայքի մարզ										
Աբովյան	12	43.07	73.1	6639.9	894.7	42	40.97	279.3	11942.7	4525.5
Եղվարդ	5	12.11	77.0	2220.8	627.6	23	96.79	174.4	11971.8	2695.6
Հրազդան	9	2.11	256.0	415.0	323.7	8	5.64	130.5	10256.4	1780.5
Շիրակի մարզ										
Ախուրյան						7	8.56	252.0	1693.1	603.2
Ամասիա						1	2.73	40.9	261.0	128.5
Անի						18	14.74	110.6	546.9	370.0
Աշոցք								58.5	215.8	126.1
Արթիկ	2	2.40	140.3	6072.0	3106.1	3	3.21	79.4	1428.6	392.3
Սյունիքի մարզ										
Գորիս						6	1.89	92.6	1023.2	710.0
Կապան	2	3.24	498.0	924.7	711.4	1	0.65	120.0	841.6	350.0
Մեղրի						1	0.34	193.0	3000.0	725.5
Սիսիան						6	8.67	46.3	1977.4	525.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						10	4.92	125.0	10000.0	1895.0
Վայք	1	3.00	8505.0	8505.0	8505.0	9	2.03	58.8	1430.7	620.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	0.25	213.3	3783.8	675.3
Իջևան						2	1.65	267.5	9454.5	1235.5
Նոյեմբերյան						10	7.12	46.7	7368.4	855.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. նոյեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մտավելագույն	Միջին			Նվազագույն	Մտավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						23	24446.6	130.7	22200.0	2574.2
Ապարան						3	5000.0	124.1	609.6	389.2
Թային						2	4234.0	63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ						2	3400.0	60.0	214.3	87.0
Արարատի մարզ										
Արտաշատ	12	11886.7	97.6	700.0	286.3	17	15734.9	173.9	7140.3	894.0
Մասիս	40	35669.6	118.0	1261.1	1205.0	29	21893.0	187.5	25000.0	1207.3
Վեդի	1	80.0	1867.0	1867.0	1867.0	16	20095.0	126.1	5000.0	661.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						26	25202.8	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան						1	1200.0	100.0	833.3	239.1
Վաղարշապատ	1	2000.0	114.9	114.9	114.9	38	29748.5	197.4	26528.4	1527.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						3	1830.0	186.6	1084.3	668.2
Ճամբարակ	1	80.0	250.0	250.0	250.0	1	1000.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	7	8400.0	219.8	223.1	220.3	15	17330.0	119.3	5000.0	280.0
Սևան	3	1806.0	428.5	447.1	434.7	2	800.0	240.0	3110.4	309.5
Վարդենիս						3	4621.0	72.5	987.2	150.0

Լոռու մարզ										
Այլպերդի	3	141.0	1650.0	1650.0	1650.0	3	4560.0	114.3	1388.9	216.6
Գուգարք	2	607.0	262.2	268.3	265.3	6	4284.7	77.9	14083.3	1148.0
Սպիտակ						8	11000.2	104.9	1348.3	206.0
Ստեփանավան						1	1220.0	88.2	1666.7	175.5
Տաշիր	4	199.0	324.6	722.0	563.4			45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Արուսյան	1	537.5	4750.3	4750.3	4750.3	40	30775.1	264.5	35353.5	1978.0
Եղվարդ	4	3200.0	2737.0	2861.4	2768.1	28	24658.7	173.6	27000.0	2856.0
Հրազդան	1	800.0	1267.5	1267.5	1267.5	18	17880.0	117.7	34848.5	1320.5
Շիրակի մարզ										
Ախուրյան						9	6807.5	113.6	18750.0	332.5
Ամասիա						1	1450.0	45.3	274.7	71.0
Անի						3	4260.0	67.9	180.6	162.2
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ	7	682.0	253.0	3000.0	2190.5	2	800.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						1	600.0	112.2	1700.0	367.8
Կապան						1	1364.8	67.9	2638.9	300.0
Մեղրի						1	236.0	68.5	632.9	203.5
Սիսիան						3	1283.3	123.5	875.0	202.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	698.1	750.0	766.1	758.1	3	2640.0	96.7	7659.6	501.1
Վայք						1	500.0	120.7	1448.3	206.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	790.0	75.8	810.0	112.0
Իջևան	10	11324.6	160.0	4800.0	2896.0	11	12225.2	74.1	14423.1	519.6
Նոյեմբերյան						1	1390.0	125.0	1948.1	225.0

2012թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 894 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.7%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 64.8%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2012թ. նոյեմբերին, 2012թ. հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 2.8%-ով, իսկ 2011թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 38.4%-ով:

2012թ. նոյեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 45 բնակարանների, 89 անհատական բնակելի տների, 402 հասարակական, 139 արտադրական նշանակության օբյեկտների, 209 հողերի, 1 այգետնակի և 9 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2012թ. նոյեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 3 վարձակալության գործարքների քանակը 2012թ. հոկտեմբերի համեմատ մնացել է անփոփոխ, իսկ 2011թ. նոյեմբերի համեմատ նվազել՝ 50.0%-ով: 2012թ. նոյեմբերին հանրապետությունում վարձակալված 333.41 հա հողերից 0.77 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 332.64 հա հողերից 305.50 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 9.44 հա արդյունաբերական օբյեկտների, 5.11 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արմավիրի մարզում՝ 186.04 հա, որից 185.20 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1978 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.6%ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. հոկտեմբերի համեմատ, նվազել է 5.4%-ով, իսկ 2011թ. նոյեմբերի համեմատ՝ 15.9%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /45.3%/, առանձնատների /26.5%/, հասարակական նշանակության օբյեկտների /9.4%/ և հողերի /13.9%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 905 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. հոկտեմբերի համեմատ, նվազել է 21.1%-ով, իսկ 2011թ. նոյեմբերի համեմատ՝ 20.4%-ով:

2012թ. նոյեմբերին հանրապետությունում գրավադրվել են 325.82 հա հողեր, որից 26.87 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 73.1%-ը կամ 238.33 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 2.15 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 105.17 հա, որից 101.40 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. նոյեմբերին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 155 գործարքներ, որից 91-ը՝ Երևանում: 2012թ. հոկտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 8.8%-ով, ընդ որում Երևանում՝ 26.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել է 36.2%-ով: 2011թ. նոյեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 35.7%-ով, ընդ որում Երևանում՝ 52.4%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել է 28.0%-ով:

2012թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2157 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2012թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 7.6%-ով, իսկ 2011թ. նոյեմբերի համեմատ՝ 30.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 13.7%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /29.9%/:

« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե